

117 Փոխաբային ընթերցեալ զայն
 Զքննէր գանկատն որ բազմազան.
 Եւ քանզի էր այր խոհական,
 Ճանաչէր փոյթ զփէթ Յակոբեան:

118 Ուստի ասէր երկուց նոցուն
 Երեւի թէ առ նախանձուն
 Պատրիարգ ձեր զյանցանս անհուն
 Դո՛ւն է ի վերայ Սարգսի ուսոյն:

119 Յայտ է թէ սոյն Սեւազլուխ
 Սիրեալ յԱզգէ իւրմէ ոչ սուղ
 Առթէ նրմա ըզմեծ երկիւղ
 Կորուսելոյ գահն եւ կնգուղ:

120 Վասն այն այսչափ պարտաւորէ
 Զայր մի որ արդ աստ ներկայ չէ,
 Բայց դատաստան մեր պահանջէ
 Լըսել նաեւ որ սադրեալն է:

121 Երբ սոյն գանկատ իրաւասցի
 Սարգիս ոչ թէ է արժանի
 Աքսորանաց լ' արգելանի,
 Այլ ըսպանման կախաղանի:

122 Միջնորդքն անդրէն նոյն մատնութեան
 Համբուրելով միաբերան
 ԶԵպարբոսին ըզգրապան
 Մաղթեն առ նա ձեռնագրել զայն:

123 Եւ մանաւանդ Պետրոսն ախմար
 Փոխաբային յանդրգնաբար
 Ասէր այսուիկ, ով Տէր արդար,
 Ըստանայցես վարձ անհամար: